

ЛИЛИТ ХАЧАТРЯН
ПРОБЛЕМЫ УПРАВЛЕНИЯ ИНВЕСТИЦИОННЫМ ПОРТФЕЛЕМ НА
ФОНДОВОМ РЫНКЕ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Ключевые слова: *Инвестиционный портфель, диверсификация, ценные бумаги, концентрация активов, оптимизация портфеля.*

Эффективное управление инвестиционными портфелями имеет большое значение для функционирования финансовых институтов, так как только в этом случае можно предоставить ценным бумагам лучший коэффициент риска и доходности, сочетающий инвестиционные характеристики различных инструментов. Эта статья посвящена проблем, возникающим при управлении инвестиционным портфелем в Армении. В целях выявления существующих проблем и предоставления эффективных решений для них в статье затрагивался опыт разработки инвестиционных портфелей на международном рынке. В исследовании особенности и структура инвестиционного портфеля были проанализированы отдельно, в зависимости от класса и типа финансового учреждения, а также подробное исследование риска и доходности инструментов, доступных в портфеле.

LILIT KHACHATRYAN
THE ISSUES OF INVESTMENT PORTFOLIO MANAGEMENT IN STOCK
MARKET OF RA

Key words: *investment portfolio, diversification, securities, concentration of instruments, portfolio optimization.*

Proper and effective management of investment portfolios is of great importance in the activities of financial institutions because only in this case it is possible to transfer securities to the best risk and profitability ratio by combining the investment characteristics of various instruments This article is devoted to the identification of investment portfolios problems. For the purpose of identifying existing problems and offering effective solutions to them, the article touched upon the experience of investment portfolios in the international market. In the study, the features and structure of the investment portfolio were analyzed separately, depending on the class and type of financial institution, also were analyzed the risk and profitability of the instruments available in the portfolio.

ԼՈՒՍԻՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ

*Վիճակագրություն, բակալավրիատ,
4-րդ կուրս*

ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ՎԱՐԿԱՅԻՆ
ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հիմնաբառեր. *առևտրային բանկ, ակտիվներ, վարկեր*

Հոդվածում ուսումնասիրվել է ՀՀ առևտրային բանկերի վարկանիշն ըստ ակտիվների (2017 թ.՝ 2016-ի համեմատ), ինչպես նաև ըստ ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրված փարեկան միջին վարկերի: Սրացված արդյունքները

վկայում են այն մասին, որ վարկերի կառուցվածքը զգալի փոփոխությունների է ենթարկվել, ինչը հիմնականում տեղի է ունեցել 2010-2017 թթ. ընթացքում:

Բոլոր տեսակի վարկային գործառնությունները տնտեսության բնականոն գործունեության ապահովման նախադրյալներից են: Վարկը, շուկայական տնտեսության անխափան գործունեություն ապահովելու տեսանկյունից, կատարում է մի քանի գործառնություն՝ վերաբաշխման, միջոցների շրջանառության ապահովման, կապիտալի ու արտադրության կենտրոնացման և տնտեսության վարկային կարգավորման: Վարկը՝ որպես փոխառու կապիտալ, վերաբաշխվում է տնտեսության ճյուղերի միջև՝ ելնելով շուկայի օրենքներից: Այսինքն, նշված կապիտալի հոսքն ուղղվում է դեպի բարձր շահույթ ապահովող ճյուղերը: Մյուս կողմից, վարկն անհրաժեշտ է գործող կազմակերպություններին միջոցների անընդհատ շրջանառության ապահովման, ապրանքների սպառման գործընթացի սպասարկման համար: Վարկը գործուն ազդեցություն է թողնում նաև երկրի դրամական զանգվածի կառուցվածքի, դրամաշրջանառության արագության վրա:¹

Վարկը կարող է նաև պետության կողմից որպես գործիք օգտագործվել կապիտալ ներդրումների, բնակարանային շինարարության և տնտեսության շահութաբեր ճյուղերի զարգացման համար: Վարկի կառավարական երաշխիքների և արտոնությունների տրամադրման միջոցով պետությունը խթանում է այն կազմակերպությունների և ճյուղերի արտոնյալ վարկավորումը, որոնց գործունեությունը համապատասխանում է տնտեսական զարգացման նպատակային ծրագրերին ու նախապատվելի ուղղություններին²:


Վարկի միջոցով հնարավոր է կարգավորել դրամաշրջանառությունը՝ համապատասխանեցնելով այն փողի քանակին: Մեր ուսումնասիրություններից պարզ է դառնում, որ հատկապես կարևոր է դրա նշանակությունը շուկայական տնտեսության պայմաններում, քանի որ խթանում է ձեռնարկատիրական գործունեության ծավալումը և արտադրության անընդհատությունը: Բացի դրանից, եթե հնարավոր չէ կապիտալի և հիմնական միջոցների ազատ հոսքը մի ճյուղից մյուսին ֆիզիկական մեծությամբ, ապա վարկը կարող է ցածր շահութաբերության մակարդակ ունեցող ճյուղից հոսել բարձր շահութաբերության մակարդակ ունեցող ճյուղ՝ ապահովելով շահույթի միջին մակարդակ: Վարկը արժեքի շարժ է, որը կարող է լինել ինչպես դրամական, այնպես էլ ապրանքային ձևով: Վարկի շարժը կատարվում է հետևյալ կերպ՝ վարկի հատկացում, վարկի ստացում, վարկի օգտագործում, դրամական միջոցների ազատում, հետագայում փոխառուի կողմից վարկի վերադարձում, վարկի հետ ստացում վարկավորողի կողմից:

Այժմ ուսումնասիրենք ՀՀ առևտրային բանկերի վարկանիշը 2016-2017 թթ.:

Աղյուսակ 1-ից երևում է, որ Հայաստանում գործող 17 բանկերից 12-ը 2017 թ. ավելացրել են իրենց ակտիվները:

¹ Տե՛ս Ա. Բագրատյան, Ա. Բալասանյան, Բանկային գործ, Երևան, Նաիրի, 2003, էջ 114:

² Տե՛ս Ե. Մ. Морсман — младший, Управление кредитным портфелем, Москва, 2004, էջ 24:



Գծապատկեր 1. Վարկի շարժը

Ակտիվների մեծությամբ առաջատար բանկերի թվում են Ամերիաբանկը, Հայբիզնեսբանկը, Արդշինբանկը, Ակբա-կրեդիտ ագրիկոլ բանկը, Ինեկոբանկը: Միաժամանակ, առաջատար հնգյակին բաժին է ընկել երկրի բանկային համակարգի համախառն ակտիվների ավելի քան կեսը՝ 55.8%-ը կամ 2.4 տրլն դրամ:

Ամերիաբանկի ակտիվները հաշվետու ժամանակահատվածում կազմել են 677.7 մլրդ դրամ 2016 թ. համեմատ կրճատվելով 5.8%-ով: Միաժամանակ, բանկային համակարգի համախառն ակտիվներում դրանց բաժնեմասը կազմել է 15.5%: Երկրորդ հորիզոնականում Հայբիզնեսբանկն է, որի բաժնեմասը բանկերի համախառն ակտիվներում կազմել է 13.1%: Բանկի ակտիվները հաշվետու ժամանակահատվածում աճել են 42.17%-ով՝ մինչև 574.9 մլրդ դրամ:

Աղյուսակ 1
Հայաստանի առևտրային բանկերի վարկանիշը ըստ ակտիվների

N	Բանկ	12/31/2016 մլն դրամ	12/31/2017 մլն դրամ	Աճը նախորդ տարվա համեմատ, %
1	Ամերիաբանկ	719.36	677.72	-5.79
2	Հայբիզնեսբանկ	404.41	574.94	42.17
3	Արդշինբանկ	548.41	568.27	3.62
4	Ակբա-կրեդիտ ագրիկոլ բանկ	283.27	311.02	9.80
5	Ինեկոբանկ	236.20	277.84	17.63
6	Կոնվերս Բանկ	190.99	252.74	32.33
7	ՎՏԲ-Հայաստան բանկ	232.67	216.06	-7.14
8	Արարատ բանկ	215.56	212.60	-1.37
9	HSBC բանկ Հայաստան	215.16	208.65	-3.03
10	Յունիբանկ	185.34	203.22	9.61
11	Հայէկոնոմբանկ	146.18	190.80	30.52
12	Արմավիսբանկ	130.25	162.02	24.39
13	Արցախբանկ	104.25	137.34	31.74
14	Անեյիք Բանկ	282.45	131.93	-53.29
15	Էվոկաբանկ	89.50	105.53	17.92
16	Բիբլոս Բանկ Հայաստան	64.19	85.12	32.61
17	Մեյլարբանկ	41.24	46.27	12.18
Ընդամենը՝ ըստ բոլոր բանկերի		4089.43	4362.07	6.67


Երրորդ տեղում Արդշինբանկն է՝ ակտիվների շուրջ 13%-անոց բաժնեմասով: Միաժամանակ բանկի ակտիվները 2017 թ. ավելացել են 3.6%-ով՝ մինչև 568.2 մլրդ դրամ:

Ակբա-կրեդիտ ագրիկոլ բանկը զբաղեցնում է վարկանիշի չորրորդ տեղը՝ համախառն ակտիվներում 7.1% բաժնեմասով: Բանկի ակտիվները 2017 թ. ընթացքում աճել են 9.8%-ով՝ կազմելով 311 մլրդ դրամ: Ակտիվների մեծությամբ բանկերի առաջատարների հնգյակը եզրափակում է Ինեկո-բանկը, որի բաժինը բանկային համակարգում կազմում է 6.3%: 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բանկի ակտիվները կազմել են 277.8 մլրդ դրամ 2016 թ. համեմատ ավելանալով 17.6%-ով:

2017 թ. ակտիվների առավելագույն աճ են ցուցաբերել Հայբիզնեսբանկը (42.17%), Բիբլոս Բանկ Հայաստանը (32.6%) և Կոնվերս Բանկը (32.3%): Միևնույն ժամանակ, ակտիվների կրճատման ամենամեծ ցուցանիշն Անելիք Բանկին է (53.3%):

Անհրաժեշտ է նշել, որ 2017 թ. դրությամբ ՀՀ առաջատար հինգ բանկերի ակտիվները կազմել են բանկային համակարգի ակտիվների 54.3%-ը, իսկ ըստ վարկերի ընդհանուր վարկային պորտֆելի՝ 59.3%-ը: Ակտիվների այսպիսի կառուցվածքը թույլ է տալիս բանկերին՝ մեծացնել իրենց վարկային պորտֆելները:

Երկարաձգված և ժամկետանց վարկերի տեսակարար կշիռը 2017 թ. համապատասխանաբար կազմել է՝ 3.72% և 1.19%: Ժամկետանց վարկերի ծավալը տարեկան կտրվածքով նվազել է 0.5%-ով, իսկ եռամսյակում՝ 16.1%-ով՝ կազմելով 31.8 մլրդ դրամ: Երկարաձգված վարկերի ծավալը տարվա ընթացքում նվազել է 0.2%-ով, իսկ եռամսյակում՝ 20.5%-ով՝ կազմելով 99.6 մլրդ դրամ: Ընդ որում, երկարաձգված վարկերի կառուցվածքում գերակշռում են կարճաժամկետ վարկերը, մինչդեռ, ժամկետանց վարկերի կառուցվածքում երկարաժամկետ վարկերը:



Գծապատկեր 2. Հայաստանի առևտրային բանկերի վարկանիշն ըստ ակտիվների (2017 թ. ' 2016-ի համեմատ, %)

Դրամային վարկերի միջին տոկոսադրույքը 2017 թ. դեկտեմբերին կազմել է 13.26%, նախորդ տարվա 15.38%-ի և նախորդ եռամսյակի 12.05%-ի փոխարեն:

Միջազգային փորձը վկայում է, որ տարբեր առևտրային բանկերում, նույնիսկ առանձին բանկի ներսում, կիրառվում են վարկերի տրամադրման տարբեր ընթացակարգեր, որոնք կախված են մի շարք հանգամանքներից, այդ թվում՝ հավանական վարկառուի ձեռնարկատիրական գործունեության առանձնահատկություններից, վերլուծության և գնահատման մեթոդաբանությունից, վարկերի տեսակներից, ապահովվածությունից, վարկի գումարից և այլն:

Վարկերի տրամադրումը առևտրային բանկերի ավանդական գործառնություններից է, ակտիվային գործառնությունների կարևորագույն հատվածը, իսկ դրանից ստացված տոկոսներից գոյանում է բանկի տոկոսային եկամուտների զգալի մասը: Բավական է նշել՝ բանկային վարկավորման ընդհանուր ծավալը 2017 թ. ավելացել է 11%-ով՝ կազմելով 2.677 տրլն դրամ, իսկ չորրորդ եռամսյակում աճը կազմել է 7.3%: Առանց երկարաձգված և ժամկետանց վարկերի, Հայաստանի բանկային համակարգի վարկային ներդրումները տարեկան կտրվածքով աճել են 11.6%-ով, իսկ չորրորդ եռամսյակում 9.2%-ով՝ կազմելով 2.545 տրլն դրամ:

Հետևաբար, բանկերի համար առանձնապես կարևորվում է վարկային գործունեության ողջ գործընթացի կառավարումը: Բանկի որդեգրած խելամիտ վարկային քաղաքականության դեպքում կարելի է ակնկալել նրա հիմնական տոկոսային եկամուտների ստացում, վճարունակության և կայունության ցուցանիշների բարելավում և, ընդհակառակը, վարկային ռիսկի կառավարման բնագավառում բացթողումները կարող են դառնալ զգալի կորուստների պատճառ:

ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրված տարեկան միջին վարկերի կառուցվածքի փոփոխության ինտենսիվությունը 2004-2017 թթ. ավելի ակնառու դարձնելու համար հաշվարկենք կառուցվածքային տեղաշարժերի ընդհանրական ցուցանիշները, որոնց հաշվարկային տվյալները բերված են հավելված 1-ում, ընդ որում՝ որպես ուսումնասիրվող ժամանակաշրջան ընտրել ենք ոչ թե հաջորդող տարիներ, այլ յոթամյա կտրվածքով տարիներ՝ 2003, 2010, 2017 թվականները:

Հաշվարկների արդյունքները ներկայացված են ընդհանրական աղյուսակի տեսքով, որոնք ցույց են տալիս, որ տեղի են ունեցել մեծ կառուցվածքային տեղաշարժեր, այսինքն՝ կայունացման գործընթաց:

Աղյուսակ 2

ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրված փարեկան միջին վարկերի կառուցվածքային փարբերությունները, %

Գնահատման չափանիշներ	2010 թ. ' 2003 թ. նկատմամբ	2017 թ. ' 2010 թ. նկատմամբ	2017 թ. ' 2003 թ. նկատմամբ
Բացարձակ կառուցվածքային տեղաշարժերի գծային գործակից	20.53	23.7	5.19
Բացարձակ կառուցվածքային տեղաշարժերի քառակուսային գործակից	23.13	26.69	4.58
Հարաբերական կառուցվածքային տեղաշարժերի քառակուսային գործակից	63.77	146.86	163.02

Ստացված արդյունքներից պարզ երևում է, որ կառուցվածքային տեղաշարժերն էական են, որովհետև վիճակագրությունն այս ցուցանիշի մեծությունը բնականոն է համարում, երբ այն չի գերազանցում տարեկան 5%-ի սահմանը:

Այսպիսով, տարեկան միջին վարկերի ընդհանուր ծավալում 2010 թ., 2003 թ. համեմատ, ձեռնարկություններին, տնային տնտեսություններին, շահույթ չհետապնդող կազմակերպություններին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված տարեկան միջին վարկերը միջին հաշվով փոխվել են 20.53%-ով, իսկ 2017 թ., 2010 թ. համեմատ՝ 23.7%-ով: 2000-2017 թթ. այդ չորս ոլորտների տեսակարար կշիռները միջինում փոխվել են 5.19%-ով:

Ստացված արդյունքները վկայում են, որ 2003-2017 թթ. մեր հանրապետության ռեզիդենտներին տրված տարեկան միջին վարկերի կառուցվածքը զգալի փոփոխությունների է ենթարկվել, ինչը հիմնականում տեղի է ունեցել 2010-2017 թթ. ընթացքում:

ЛУСИНЕ ХАЧАТРЯН СТАТИСТИЧЕСКИЙ АНАЛИЗ КРЕДИТНЫХ ОПЕРАЦИЙ КОММЕРЧЕСКИХ БАНКОВ РА

Ключевые слова: коммерческий банк, активы, кредиты.

В статье был изучен рейтинг коммерческих банков Армении по активам 2017 года по сравнению с 2016 годом. Также было проведено исследование по средним годовым кредитам, выданным резидентам Коммерческими банками РА. Полученные результаты свидетельствуют о том, что структура кредитов претерпела значительные изменения, что в основном имело место в период 2010-2017 гг.

LUSINE KHACHATRYAN STATISTICAL ANALYSIS OF CREDIT OPERATIONS OF COMMERCIAL BANKS OF RA

Key words: commercial bank, assets, loans.

The article examined the rating of commercial banks of Armenia for assets in 2017 compared to 2016. A study was also carried out on average annual loans issued to residents by commercial banks of the Republic of Armenia. The obtained results show that the structure of loans has undergone significant changes, which basically took place in the period of 2010-2017.